# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 5-ՐԴ ԿԱՐԾԻՔ

## ՀԱԿԻՐՃ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Խորհրդատվական կոմիտեն ուրախ էր լսել տասնմեկ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցից հայ հասարակության շրջանում տիրող հանդուրժողականության գերակշռող մթնոլորտի մասին: Նրան շարունակում է մտահոգել իշխանությունների, մեծամասնության և ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանում Շրջանակային կոնվենցիայով ամրագրված ազգային փոքրամասնությունների իրավունքների բովանդակության մասին սահմանափակ տեղեկացվածությունը: Հետևաբար, իշխանությունները բավարար միջոցներ չեն ձեռնարկում այն պայմանների ստեղծման ուղղությամբ, որոնք անհրաժեշտ են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրենց մշակույթն ու ինքնությունը պահպանելու և զարգացնելու համար: Խորհրդատվական կոմիտեն նկատել է նաև, որ փոքրամասնությունների կարծրատիպային կամ բանահյուսական պատկերը խոչընդոտում է իրական միջմշակութային երկխոսությանը: Բացի այդ, ավելի սակավաթիվ ներկայացուցիչներ ունեցող ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը դեռևս ցածր է, և ապագայում առկա է այս խմբերի ձուլման վտանգ: Վերոնշյալ փոքրամասնությունների մշակույթն ու ինքնությունը պահպանելու և զարգացնելու համար անհրաժեշտ են նպատակաուղղված ջանքեր:

2. Մշտադիտարկման վերջին շրջափուլի ընթացքում ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին օրենսդրության մշակման և դրա արդյունավետ կիրառման ոլորտում նկատվել է սահմանափակ առաջընթաց: Իշխանություններն ընդգծել են, որ ազգային փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում այս օրենսդրական լճացումը պայմանավորված է եղել ՔՈՎԻԴ-19 համավարակի և 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում ռազմական գործողությունների բռնկման համակցված ազդեցությամբ: Բացի այդ, Խորհրդատվական կոմիտեն նկատել է, որ հակամարտությունը բացասական ազդեցություն է ունեցել մարդու իրավունքների, այդ թվում՝ փոքրամասնությունների իրավունքների իրականացման վրա:

3. Խորհրդատվական կոմիտեն միանում է միջազգային այլ կազմակերպությունների և քաղհասարակության պահանջին եզդի աղջիկների ծանր իրավիճակի վերաբերյալ՝ կապված նրանց վաղ ու հարկադիր ամուսնությունների և հանրակրթական դպրոցներից դուրս մնալու ցուցանիշների հետ: Կոմիտեն կարող է միայն գովաբանել այդ խնդրի լուծման ուղղությամբ աշխատող եզդիական կազմակերպություններին, սակայն հստակ անհրաժեշտություն է տեսնում, որպեսզի իշխանություններն ակտիվացնեն իրենց ջանքերն այդ հարցերի ուղղությամբ: Այս համատեքստում տագնապ է հարուցում եզդի իրավապաշտպանի նկատմամբ քրեական հետապնդումը: Դրա հետ կապված՝ Խորհրդատվական կոմիտեն մտահոգված է խտրականության հասարակական ընկալման բացակայությամբ, ինչը խոչընդոտում է լիարժեք և արդյունավետ իրավահավասարության հասնելուն:

### «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենք, մարդահամար

4. Հայաստանում չկա ազգային փոքրամասնությունների մասին համապարփակ օրենսդրություն: 2016 թվականին մշակվել է «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը, որը սակայն չի ընդունվել: Հաջորդ մարդահամարը

տեղի կունենա 2022 թվականի հոկտեմբերին:

## Խտրականության հարցերին առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակ. իրավահավասարության վերաբերյալ տվյալներ

5. Առկա չէ խտրականությունն արգելող համապարփակ օրենսդրական դաշտ: Հայաստանի օրենսդրությունում սահմանված չեն «խտրականություն» հասկացությունն ու խտրականության ձևերը: 2016 թվականին մշակվել է «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը, որը սակայն չի ընդունվել: Առկա չէ համապարփակ վիճակագրություն՝ ըստ տարիքի, սեռի և աշխարհագրական բաշխվածության, հատկապես՝ կրթության, զբաղվածության, առողջապահական ծառայությունների, սոցապ ծառայությունների շահառուների և ազգային փոքրամասնություններին պատկանող կանանց և երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության ոլորտներում:

## Միջմշակութային երկխոսություն

6. Բացառությամբ ավելի մեծաթիվ և «տեսանելի» փոքրամասնությունների, Հայաստանում ազգային փոքրամասնությունների գոյության մասին տեղեկատվությունը շատ ցածր է: Ազգային փոքրամասնություններին ընդունելը կամ հանդուրժելը բնորոշ է հայ հասարակությանը, սակայն ազգային փոքրամասնությունների պատմությանը, մշակույթին և ավանդույթներին իրական ներգրավվածությունը բացակայում է: Դա իր հերթին խոչընդոտ է իրական միջմշակութային երկխոսության համար:

## Պաշտպանություն գենդերային հիմքով բռնությունից

7. Եզդի աղջիկների վաղ և հարկադիր ամուսնությունները շարունակում են մտահոգիչ խնդիր լինել Հայաստանում, և հենց եզդիական համայնքն է այս հարցը ներկայացրել Խորհրդատվական կոմիտեի ուշադրությանը: Գործողություններ են ձեռնարկվել այս վնասակար գործելակերպի դեմ պայքարելու ուղղությամբ, սակայն նշվել է, որ իշխանությունները պետք է անեն ավելին՝ դրա դեմ պայքարելու նպատակով:

## Արտահայտվելու ազատություն

8. 2020 թվականից ի վեր օրենսդրական մի շարք փոփոխություններ են կատարվել, որոնք սահմանափակում են արտահայտվելու ազատությունը, և որոնցից մի քանիսը մտահոգիչ են: Այս համատեքստում եզդի իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանի քրեական հետապնդումը նույնպես մտահոգություններ է հարուցել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և ազգային ատյաններում՝ ընդգծելով իրավապաշտպանների և փոքրամասնությունների իրավունքների ջատագովների նկատմամբ դրսևորված «սառեցնող ազդեցությունը»:

## Կրթություն

9. Դպրոցական ուսումնական ծրագրերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ կան, և միջմշակութային կրթության միակ հնարավորությունը փոքրամասնությունների հետ միասին դասերին հաճախելն է: Ուսումնական ծրագրերում ազգային փոքրամասնությունների ներկայության մեծացումը կխթանի պատկանելության ավելի մեծ զգացում և կդառնա հանրակրթությունից դուրս մնալու դեպքերի նվազեցման ռազմավարության մի մասը: Տավուշի մարզում ուսումնական նոր ծրագրի մշակումն ու փորձարկումը հնարավորություն է ընձեռում այս համատեքստում դրական փոփոխությունների համար:

10. Խորհրդատվական կոմիտեն անհանգստացած է

հանրակրթությունից դուրս մնալու բարձր ցուցանիշներով եզդիների շրջանում, և հատկապես գենդերային կողմնակալության, քանի որ աղջիկներն ավելի շատ են դուրս մնում, քան տղաները: Իշխանությունների կողմից շատ քիչ ջանքեր են գործադրվում այս խնդիրների լուծման ուղղությամբ: Գոյություն ունի գործոնների բարդ ցանց, որոնցից յուրաքանչյուրը նպաստում է այս իրավիճակին, և դրանք չի կարելի դիտարկել առանձին: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է համապարփակ ռազմավարություն, որը կմշակվի եզդիների մասնակցությամբ և նրանց համար:

11. Եզդիերեն լեզվի ուսուցումն առաջարկվում է միայն որպես արտադասարանային առարկա, մինչդեռ ասորերենը դասավանդվում է ընդհանուր ռուսալեզու ուսումնական ծրագրի շրջանակներում, սակայն շաբաթական ընդամենը երեք ժամ: Ավելի սակավաթիվ փոքրամասնությունների համար նախատեսված կիրակնօրյա դպրոցներին կարող է անհրաժեշտ լինել լրացուցիչ աջակցություն իշխանությունների կողմից: Եզդիերեն լեզվով կրթության առաջարկի բարելավումը պահանջում է ավելի շատ ուսուցիչներ, և այդ հարցը դժվար է լուծել, երբ այդ լեզվով առկա առաջարկն այնքան ցածր է: Իշխանությունների կողմից պահանջվում են նախնական դրական քայլեր այս արատավոր շրջանը ճեղքելու համար:

## Արդյունավետ մասնակցություն

12. Ազգային փոքրամասնությունների խորհուրդը շարունակում է մնալ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և իշխանությունների միջև պաշտոնական երկխոսության միջոցը: Այդ Խորհրդին միանալու պահանջները կարող են բացառող լինել այն փոքրամասնությունների համար, որոնք բոլորովին վերջերս ազգային փոքրամասնություն ճանաչվելու վերաբերյալ դիմում են ներկայացրել որպես: Ազգային ժողովի մակարդակում ընտրվում է չորս պատգամավոր քանակապես ամենախոշոր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից, թեև Խորհրդատվական կոմիտեն որոշ քննադատություն է լսել այդ համակարգի հասցեին: Ընդգծվել է տեղական ինքնակառավարման մարմիններում ներկայացուցչության վրա վարչական վերջին փոփոխությունների բացասական ազդեցությունը: Մտահոգիչ է «խոշորացման» գործընթացում վարչական և տարածքային բարեփոխումների շուրջ խորհրդակցությունների բացակայությունը: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ ազգային փոքրամասնությունների հետ արդյունավետ խորհրդակցությունները կարևոր են այդպիսի որոշումներ կայացնելիս:

13. Տնտեսական հնարավորությունների սակավությունը խնդիր է, որն ընդհանրապես առկա է հայ հասարակությունում, բայց որն ազդում է ազգային փոքրամասնությունների վրա, մասնավորապես գյուղական համայնքներում: Ազգային փոքրամասնությունների գործազրկության վերաբերյալ տվյալներ չկան, սակայն անհրաժեշտ է ունենալ սոցիալ-տնտեսական իրավիճակի և աշխատաշուկայում ցանկացած խտրականության մասին ճշգրիտ պատկեր:

## Առաջարկություններ անհապաղ գործողությունների վերաբերյալ

14. Խորհրդատվական կոմիտեն հորդորում է իշխանություններին արդյունավետորեն պաշտպանել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց և նրանց ներկայացուցիչների ազատ՝ արտահայտվելու իրավունքը՝ համաձայն մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների, և արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ արտահայտվելու ազատության վրա «սառեցնող ազդեցության» դեմ պայքարելու նպատակով:

15. Խորհրդատվական կոմիտեն հորդորում է իշխանություններին ապահովել ազգային փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի և լեզվի ու հասարակության կյանքում նրանց ունեցած ներդրումների մասին տեղեկատվության ներառումը դպրոցական ծրագրերում և ուսուցիչների վերապատրաստման ու ուսումնական հարակից նյութերում: Այս համատեքստում Տավուշում փորձնական ուսումնական ծրագրի արդյունքների գնահատում պետք է իրականացվի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ խորհրդակցությամբ:

16. Խորհրդատվական կոմիտեն հորդորում է իշխանություններին առաջնահերթ միջոցներ ձեռնարկել եզդի աշակերտների, հատկապես աղջիկների, հանրակրթությունից դուրս մնալու անհամաչափ բարձր ցուցանիշների դեմ պայքարելու նպատակով: Իշխանությունները պետք է տվյալներ հավաքագրեն և համագործակցեն քաղհասարակության ու փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ՝ մշակելու և իրականացնելու հստակ ցուցիչներով ու արդյունքներով ռազմավարություն՝ դպրոցից դուրս մնալու ցուցանիշների նվազեցման նպատակով՝ հաշվի առնելով դրան նպաստող գործոնների ամբողջ շրջանակը:

17. Խորհրդատվական կոմիտեն հորդորում է իշխանություններին հավաքագրել տվյալներ ազգային փոքրամասնություններին պատկանող կանանց և երեխաների նկատմամբ գենդերային հիմքով բռնության դեպքերի, այդ թվում՝ վաղ և հարկադիր ամուսնությունների վերաբերյալ, և մշակել համապարփակ քաղաքականություն ու միջոցառումներ՝ այդ հարցի կանխարգելման և դրա դեմ պայքարի նպատակով սերտորեն փոխգործակցելով իրավապահ և սոցիալական ծառայությունների հետ և ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ: Այդպիսի քաղաքականությունը պետք է լինի ապացուցահեն և ուղղված լինի վաղ և հարկադիր ամուսնությունների հիմքում ընկած սոցիալական, տնտեսական ու մշակութային դրդապատճառների վերացմանը: Այն պետք է նպատակ ունենա համայնքին տրամադրել խոցելի անձանց համար խնամք ու ամրապնդել վստահությունը խմբերի, անհատների և հաստատությունների միջև, ինչպես նաև ներառի տեղեկատվական արշավներ ծնողների շրջանում, դպրոցներում և համայնքներում:

18. Խորհրդատվական կոմիտեն հորդորում է իշխանություններին վերանայել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը՝ միջազգային չափորոշիչներին՝ ներառյալ Շրջանակային կոնվենցիային այն լիարժեք կերպով համապատասխանեցնելու նպատակով՝ երաշխավորելով, որ բոլոր շահագրգիռ անձանց հետ արդյունավետ խորհրդակցությունն է անցկացվել ըստ հարցի էության:

Դրանից ելնելով՝ իշխանությունները պետք է շարունակեն Օրենքի ընդունման գործընթացը:

## Լրացուցիչ առաջարկություններ[1]

19. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին անհապաղ շարունակել խտրականության դեմ պայքարի մասին համապարփակ իրավական դաշտի ընդունման գործընթացը՝ խորհրդակցելով քաղհասարակության ներկայացուցիչների հետ:

20. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ձեռնարկել միջոցներ՝ ուղղված ազգային բոլոր փոքրամասնությունների համար իրավահավասարության մասին հուսալի տվյալների հավաքագրմանը՝ ըստ տարիքի, սեռի և աշխարհագրական բաշխվածության, բոլոր համապատասխան ոլորտներում, այդ թվում՝ կրթություն, գենդերային հիմքով բռնություն և սոցիալ-տնտեսական մասնակցություն՝ հիմնված ինքնանույնականացման սկզբունքին և տվյալների պաշտպանության միջազգային չափորոշիչներին համապատասխան:

21. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ակտիվացնել ազգային փոքրամասնություններին աջակցությունը՝ պահպանելու և զարգացնելու նրանց լեզվական, կրոնական և մշակութային ինքնությունը: Անհրաժեշտ են նպատակաուղղված ջանքեր ավելի սակավաթիվ փոքրամասնությունների մշակույթի հիմնական տարրերի վերականգնման համար: Ազգային փոքրամասնություններին ուղղված համապարփակ ազգային ռազմավարություն պետք է մշակվի, կիրառվի և գնահատվի ազգային փոքրամասնությունների և քաղհասարակության ներկայացուցիչների հետ սերտ ուակտիվ համագործակցությամբ:

22. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ակտիվ քայլեր ձեռնարկել Հայաստանի էթնիկ բազմազանության և հասարակության մեջ ազգային փոքրամասնությունների մշակույթի, պատմության, ավանդույթների, կրոնների և լեզուների մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ, հակազդել էթնիկ և կրոնական կարծրատիպերին և խթանել միջմշակության երկխոսության համար անհրաժեշտ նախապայմաններ:

23. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ընդլայնել փոքրամասնությունների լեզուներով, մասնավորապես՝ սորերենով ուսուցման առաջարկը, ապահովել ուսուցիչների պատշաճ վերապատրաստում և թարմացված ուսումնական նյութեր՝ դրան աջակցելու նպատակով, ինչպես նաև ավելի շատ սատարել ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին՝ կիրակնօրյա դպրոցների բացման և փոքրամասնությունների լեզուներով նախադպրոցական նախաձեռնությունների իրականացման գործում: Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին քայլեր ձեռնարկել՝ ընդլայնելու եզդիերենով ուսուցման առաջարկներն ընդհանուր ուսումնական ծրագրերում՝ տարրական և միջնակարգ մակարդակներում՝ ներառյալ ուսուցիչների ավելի շատ վերապատրաստման և ֆինանսական խթանների միջոցով, որպեսզի եզդի աշակերտները վերապատրաստվեն և աշխատեն որպես ուսուցիչներ: Միևնույն ժամանակ, իշխանությունները պետք է ներդնեն հետագա մասնագիտական, մեծահասակների և շարունակական կրթություն եզդիերենով:

24. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին

[1] Ստորև ներկայացված առաջարկությունները թվարկված են ըստ Շրջանակային կոնվենցիայի համապատասխան հոդվածների հերթականության:

ճկուն մոտեցում ցուցաբերել փոքրամասնությունների խմբերի ներկայացուցիչների նկատմամբ, որոնք իրենց նույնականացնում են որպես ազգային փոքրամասնություններ և հետաքրքրված են միանալու Ազգային փոքրամասնությունների խորհրդին, ինչպես նաև բարձրացնել այդ Խորհրդի գոյության, հանձնագրի և գործունեության մասին իրազեկվածությունը:

25. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին հավաքագրել տվյալներ ազգային փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ, հատկապես զբաղվածության, պատշաճ ենթակառուցվածքների հասանելիության և կլիմայի փոփոխության ազդեցության ոլորտներում: Պետք է մշակվեն հայտնաբերված անհավասարությունների վերացմանը միտված դրական միջոցառումներ այս հիմքի վրա և ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ սերտ համագործակցությամբ՝ նպատակ ունենալով ակտիվորեն խթանել մասնակցությունը սոցիալ-տնտեսական կյանքում:

26. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ներգրավվել երկխոսության մեջ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ տարածքային կամ վարչական բարեփոխումներին առնչվող խնդիրների շուրջ և երաշխավորել նախնական ու բովանդակային խորհրդակցություններ նախքան ապագա որևէ խոշորացում: Իշխանությունները պետք է նաև ապահովեն, որ ներկայիս առանձին համայնքներին հասանելի լինեն բավարար միջոցներ խոշորացված համայնքների հետ հավասար հիմունքներով՝ համապատասխան համայնքներում փոքրամասնությունների իրավունքների շարունակական հասանելիությունն ապահովելու նպատակով:

## Առաջարկությունների կատարումը

27. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին կազմակերպել հետագա միջոցառում այս հինգերորդ շրջափուլի Կարծիքի հրապարակումից հետո: Այն համարում է, որ սույն Կարծիքում ներկայացված դիտարկումների և առաջարկությունների քննարկման նպատակով հետագա երկխոսությունն օգտակար կլինի: Բացի այդ, Խորհրդատվական կոմիտեն պատրաստ է աջակցել՝ գտնելու սույն Կարծիքում տեղ գտած առաջարկությունների իրականացման առավել արդյունավետ ուղիները: